ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

1956 թվականի հունվարի 1-ին, Նոր տարվա առթիվ, Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ, հավատացյալների խուռն բազմության ներկայությամբ։

Ամանորի առթիվ սուրբ պատարագի միջոցին, «Հայր մեր»-ից առաջ, Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, ի հոգևոր մխիթարություն հավատացյալների, խոսեց իր իմաստալից և գեղեցիկ քարոզներից մեկը, իմաստասիրական ընդհանրացումներ և խորացումներ կատարելով, քրիստոնեական կրոնի լույսի տակ, կյանքի *և* ժամանակի *հավիտենական հարցերի և նրանց փոխհարաբերության մասին, բնաբան առնելով Սաղմոսի սքանչելի խոսքերը՝* «Պանդուխտ եմ ես առաջի քո, եղեն և անցավոր որպես ամենայն հարք իմ» *(Սաղմ., ԼԸ 13)։*

Վեհափառ Հայրապետն իր քարոզի սկզբում շնորհավորելով բովանդակ հայության Նոր տարին, բարեմաղթեց, որ 1956 թվականը լինի արդարև ամբողջ աշխարհի համար միայն և տևական խաղաղության տարի, Մայր Հայրենիքի և համայն հայ ժողովրդի համար նոր հաջողությունների, նոր նվաճումների խոստումնալից տարի, և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար ճշմարիտ հոգևոր զարթոնքի, կազմակերպվածության, ազգային-եկեղեցական միասնության արդյունաշատ տարի։

Ապա Վեհափառն ասաց.

«Մեր Ս. Եկեղեցին ամանոր կդիմավորէ այսպէս սուրբ պատարագով և գոհաբանական մաղթանքով և կաղօթէ, որպէսզի օրերը որ կուգան, ըլլան բարի օրեր, խաղաղ օրեր, արևոտ օրեր մեր ժողովուրդի և համայն մարդկության համար:

Ամեն մարդ, բոլոր ժողովուրդներն անխտիր, Նոր տարին դիմավորած են միշտ սրտատրոփ, անխառն հրճվանքով և ամենավառ հույսերով գեղուն: Ամեն ինչ որ նոր է, մոգական ուժով մը կպարուրէ մարդուն հոգին, որ գիտակցությունն ունենալով իր անկատարության, ծարավի է կատարյալին: Կատարելության, ներքին ներդաշնակության և խաղաղության ձգտող հավիտենական մարդն է, որ նոր ժամանակներու մեջ իր կյանքի վերանորոգումը, իր հոգիի վերածնունդը կփնտրէ:

Ամանորը թեև քրիստոնեական տոն մը չէ, սակայն մարդու վերանորոգման գաղափարը այնքան հարազատ է Քրիստոսի եկեղեցվույն, որ Նոր տարվա և Տիրոջ Ծննդյան և Աստվածահայտնության տոնախմբությունները հոգեկան ապրումի ամբողջություն մը կդառնան և հավատացյալը Նոր տարեշրջանի մը սկիզբը կողջունէ Աստվածորդվույն Ծննդյան «մեծ և սքանչելի խորհուրդ»-ի շնորհներով վերածնած:

Մեզ համար Նոր տարին, Նոր ժամանակներու գալուստը իմաստ ու արժեք

կատանան՝ «ժամանակ»-ը թմրոնելով հոգևոր-բարոյական կեղտով: Եվ իսկ. Ո՞ՏՆ Է ԺԱՄԱՆԱԿԸ: Այս հարցումին բազմազան պատասխաններ կուտան առաղաղեներ, փիլիսոփաներ, հոգեբաններն ու ասուածաբաններ: Սակայն մեզ կրկին. իսկ մեծ Պողոսերգոն է, որ ամենայժմեական բնորոշումը կուտա ժամանակին. չեղած դնելով մարդու կյանքի անդրանցան գաղափարին վրա: Վասնզի, մեր տեսակետով, Լակաթը այն չէ, որ ի՞նչ է ժամանակը ինքն իր մեջ, որ աստուածային իրականության կհամապատասխանե՞ ան, որ պարզապես մարդկային զգայականության մեկ կերպն է (forme de la sensibilité), այլ Լակաթը այն է, որ անակիզբ ու անվախճան ժամանակի հավիտենական տեսության մեջ, ամեն մեկս ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ ՈՒՆԻՆՔ:

Ժամանակը ամեն մեկ մարդու կյանքի անդրանցանն է: Չի «պանդուխտ» են բոլորս, «ճանապարհ» ենք բոլորս, «ճանապարհ» ենք բոլորս, ինչպես ամենայն ճարմ մեր»:

Ո՛չ որ ժամանակն է, որ կանցնի, ո՛չ որ ինքն ասուին է, որ կմեռնի ու նորը կծնի, այլ մե՛նք ենք, որ կանցնինք, մե՛նք ենք, որ կմեռնինք, մե՛նք ենք, որ կծնվինք: Եվ մենք ենք, որ կրնանք վերանորոգվիլ ու վերածնիլ:

Եվ անա մեծ հարցումը՝ ի՞նչպես ապրիլ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ:

Հուզիչ է կանգնիլ նոր տարվա սեմին վճռական որոշումով մը՝ սրբագրելով մեր բնությունները, բարելավելու մեր տկարությունները, հոգեպես վերանորոգվելու և ձգտելու կատարելության: Ապրիլ «մեր ժամանակը» ուրեն բարոյական մարդ, վերածնած Ս. Հոգվո զորությամբ և նեղգործությամբ, և ուխտել նպատակ ու իմաստ տալ մեր կյանքին՝ մեր բարի գործերով, մեր չինարար գործերով, մեր սիրո գործերով. անա՝ մեր սրբազան պարտականությունը այս նոր տարվա յուսաբաղին:

Այս հույսերով ողջունենք 1956-ը և անցամ մը ևս վերանորոգենք մեր ուխտը՝ անայլայլ կերպով ծառայելու մեր Ս. Եկեղեցվոյն, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, մեր հարազատ ժողովուրդին և մեր Մայր Հայրենիքին:

«Ցորդս ձեռաց մերոյ ուղիղ արա ի մեզ, Տէր, և զգործս ձեռաց մերոյ յաջողեա մեզ», ամեն»: